

**«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ<sup>1</sup>**  
**ԿՈՂՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԾԱԳՈՂ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**  
**ՀԱՇՏԵՑՄԱՆ ԵՎ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**  
**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության գլխավոր խորհրդատու ղոժը, որը հրավիրվել էր Փարիզում 1962 թվականի նոյեմբերի 9-ից դեկտեմբերի 12-ը՝ իր տասներկուերորդ նստաշրջանին,

իր տասնմեկերորդ նստաշրջանին ընդունելով «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիան,

ցանկանալով դյուրացնել այդ կոնվենցիայի իրականացումը և

հաշվի առնելով, որ այդ նպատակով կարևոր է ստեղծել հաշտեցման և միջնորդության հանձնաժողով, որը պատասխանատու կլինի կոնվենցիայի կողմ պետությունների միջև կոնվենցիայի կիրառման և մեկնաբանման առնչությամբ ծագող վեճերի բարեկամաբար լուծման համար,

ընդունում է սույն Արձանագրությունը 1962 թվականի դեկտեմբերի տասին:

### ՀՈՂԿԱԾ 1

Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության հովանու ներքո կստեղծվի Հաշտեցման և միջնորդության հանձնաժողով, այսուհետ՝ Հանձնաժողով, որը պատասխանատու կլինի «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիայի, այսուհետև՝ Կոնվենցիա, կողմ պետությունների միջև Կոնվենցիայի կիրառման և մեկնաբանման առնչությամբ ծագող վեճերի բարեկամաբար լուծման համար:

### ՀՈՂԿԱԾ 2

1. Հանձնաժողովը կազմված կլինի բարձր բարոյական հատկանիշներով և անկողմնակալությամբ օժտված տասնմեկ անդամից, որոնք կընտրվեն Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության գլխավոր խորհրդատու ղոժի կողմից, այսուհետև՝ Գլխավոր խորհրդատու ղոժ:

2. Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կկատարեն անձամբ:

### ՀՈՂԿԱԾ 3

---

<sup>1</sup> Ը ն դ ու ն վ ե լ է 1 9 6 2 թ վ ա կ հ ա ն Վ թ դ դ է ի ա գ մ բ Ե թ ի ն թ ս տ ի ն :

1. Հանձնաժողովի անդամները կընտրվեն սույն Արձանագրության կողմ պետությունների կողմից այդ նպատակով առաջադրված անձանց ցուցակից: Յուրաքանչյուր պետություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի իր ազգային հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո կառաջադրի առավելագույնը չորս անձի: Այս անձինք պետք է լինեն սույն Արձանագրության կողմ պետությունների քաղաքացիներ:

2. Հանձնաժողովի յուրաքանչյուր ընտրությունից առնվազն չորս ամիս առաջ Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության գլխավոր տնօրենը, այսուհետև՝ Գլխավոր տնօրեն, կդիմի սույն Արձանագրության կողմ պետություններին երկու ամսվա ընթացքում սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված անձանց թեկնածությունները ներկայացնելու համար: Նա կկազմի այս կերպով առաջադրված անձանց ցուցակը այբբենական կարգով և ընտրություններից առնվազն մեկ ամիս առաջ այն կներկայացնի Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության գործադիր խորհրդին, այսուհետև՝ Գործադիր խորհուրդ, և Կոնվենցիայի կողմ պետություններին: Գործադիր խորհուրդը վերոնշյալ ցուցակը՝ իր կողմից օգտակար համարվող առաջարկություններով, կփոխանցի Գլխավոր խորհրդաժողովին, որը կկատարի Հանձնաժողովի անդամների ընտրությունը այն ընթացակարգի համաձայն, որը սովորաբար կիրառվում է երկու կամ ավելի անձանց ընտրությունների ժամանակ:

#### ՀՈՂՎԱԾ 4

1. Հանձնաժողովում չի կարող նույն պետությունից ընդգրկվել մեկից ավելի քաղաքացի:
2. Հանձնաժողովի անդամների ընտրության ընթացքում Գլխավոր խորհրդաժողովը կջանա ընդգրկել կրթության ոլորտում ճանաչված՝ հմտություններով անձանց և հատկապես միջազգային բնույթի դատական կամ իրավական փորձ ունեցող անձանց: Հաշվի կառնվի նաև աշխարհագրական տեսանկյունից անդամների արդարացի բաշխումը և քաղաքակրթության տարբեր ձևերի, ինչպես նաև հիմնական իրավական համակարգերի ներկայացվածությունը:

#### ՀՈՂՎԱԾ 5

1. Հանձնաժողովի անդամները կընտրվեն վեց տարի ժամկետով: Նրանք իրավունք ունեն վերընտրվելու, եթե կրկին առաջադրվեն: Այնուամենայնիվ, առաջին ընտրությանն ընտրված անդամներից չորսի լիազորությունների ժամկետը կլրանա երկրորդ տարվա ավարտին, իսկ երեք այլ անդամների լիազորությունների ժամկետը՝ չորրորդ տարվա ավարտին: Առաջին ընտրությունից անմիջապես հետո այդ անդամների անունները վիճակահանությամբ կընտրվեն Գլխավոր խորհրդաժողովի նախագահի կողմից:

#### ՀՈՂՎԱԾ 6

1. Հանձնաժողովի անդամի մահվան կամ հրաժարականի դեպքում նախագահն անմիջապես կտեղեկացնի Գլխավոր տնօրենին, որը տեղը թափուր կհայտարարի մահվան օրվանից կամ հրաժարականի ուժի մեջ մտնելու օրվանից:
2. Եթե, մյուս անդամների միաձայն կարծիքով, Հանձնաժողովի անդամը դադարեցրել է կատարել իր գործառնությունները որևէ այնպիսի պատճառով, որը ժամանակավոր բնույթ կրող բացակայություն չէ, կամ անկարող է շարունակել իր պարտականությունների կատարումը, ապա Հանձնաժողովի նախագահը կտեղեկացնի Գլխավոր տնօրենին, և դրանից հետո տվյալ անդամի տեղը կհայտարարվի թափուր:

3. Գլխավոր տնօրենը Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության անդամ պետություններին և Կազմակերպության անդամ չհանդիսացող, սակայն, 23-րդ հոդվածի դրույթների համաձայն, սույն Արձանագրության կողմ դարձած պետություններին կտեղեկացնի այն թափուր տեղերի մասին, որոնք առաջացել են սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններում նախատեսված յուրաքանչյուր դեպքի համար Գլխավոր խորհրդատուները կկազմակերպի տեղը թափուր մնացած անդամի փոխարինումը մինչև նրա լիազորությունների ժամկետի ավարտը:

## ՀՈՂՎԱԾ 7

6-րդ հոդվածի դրույթների կատարման պայմանով՝ Հանձնաժողովի անդամը կշարունակի պաշտոնավարել մինչև նրա իրավահաջորդն ստանձնի պարտականությունների կատարումը:

## ՀՈՂՎԱԾ 8

1. Եթե Հանձնաժողովի կազմում ընդգրկված չէ այն պետության քաղաքացիություն ունեցող անդամ, որը, 12-րդ կամ 13-րդ հոդվածի դրույթների համաձայն, Հանձնաժողովին ներկայացված վեճի կողմ է, ապա այդ պետությունը կամ, եթե դրանք մեկից ավել են, այդ պետություններից յուրաքանչյուրը կարող է ընտրել որևէ անձի՝ ընդգրկվելու համար Հանձնաժողովում՝ որպես ժամանակավոր անդամ:

2. Այս կերպով ժամանակավոր անդամ ընտրող պետությունը պետք է հաշվի առնի Հանձնաժողովի անդամների համար պահանջվող հատկանիշները՝ հինք ընդունելով 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունը և 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները: Այս կերպով ընտրված ժամանակավոր անդամը պետք է լինի իրեն առաջադրած պետության կամ Արձանագրության կողմ պետության քաղաքացի և պետք է անձամբ կատարի իր պարտականությունները:

3. Վեճի կողմ մի քանի պետությունների դեպքում ընդհանուր շահ ունեցող պետությունները ժամանակավոր անդամների ընտրության նպատակով կդիտարկվեն որպես մեկ կողմ: Սույն դրույթի կիրառման կարգը կսահմանվի 11-րդ հոդվածում նշված՝ Հանձնաժողովի ընթացակարգային կանոններով:

## ՀՈՂՎԱԾ 9

Հանձնաժողովի անդամները և 8-րդ հոդվածի դրույթների համաձայն ընտրված ժամանակավոր անդամները Գործադիր խորհրդի սահմանած պայմաններով Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության միջոցներից կստանան ճանապարհածախս և օրապահիկ այն ժամանակահատվածների համար, որոնց ընթացքում նրանք ներգրավված են Հանձնաժողովի աշխատանքներում:

## ՀՈՂՎԱԾ 10

Հանձնաժողովի քարտուղարությունն իրականացնում է Գլխավոր տնօրեն:

## ՀՈՂՎԱԾ 11

1. Հանձնաժողովը կընտրի իր նախագահին և նախագահի տեղակալին երկու տարի ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել:
2. Հանձնաժողովը կհաստատի իր ընթացակարգային կանոնները, որոնք, ի թիվս այլնի, սահմանում են, որ.
  - ա. քվորումն ապահովվում է անդամների երկու երրորդի դեպքում, ներառյալ ժամանակավոր անդամները, եթե այդպիսիք կան.
  - բ. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ներկա գտնվող անդամների և ժամանակավոր անդամների քվեների մեծամասնությամբ: Եթե քվեները հավասար են բաշխվում, ապա վճռորոշ է նախագահի քվեն.
  - գ. եթե որևէ պետություն 12-րդ կամ 13-րդ հոդվածի ներքո հարց է ներկայացնում Հանձնաժողով, ապա.
    - (i) այդ պետությունը, այն պետությունը, որի դեմ բողոք է ներկայացվում, և սույն Արձանագրության կողմ որևէ այլ պետություն, որի քաղաքացին առնչվում է տվյալ հարցին, կարող են գրավոր փաստարկներ ներկայացնել Հանձնաժողովին,
    - (ii) այդ պետությունը և այն պետությունը, որի դեմ բողոք է ներկայացվում, իրավունք ունեն ներկայացված լինելու հարցի վերաբերյալ լսումներին և բանավոր փաստարկներ ներկայացնելու:
3. Հանձնաժողովը, առաջին անգամ առաջարկելով ընթացակարգային կանոններ մշակել, դրանց նախագիծը կուղարկի այդ պահին Արձանագրության կողմ պետություններին, որոնք երեք ամսվա ընթացքում կարող են հայտնել իրենց նկատառումները կամ առաջարկությունները: Հանձնաժողովը կվերանայի ընթացակարգային կանոնները, եթե ցանկացած պահի Արձանագրության կողմ որևէ պետություն դիմել է այդ նպատակով:

## ՀՈՂՎԱԾ 12

1. Եթե սույն Արձանագրության կողմ որևէ պետություն համարում է, որ կողմ հանդիսացող մեկ այլ պետություն չի կիրառում Կոնվենցիայի որևէ դրույթ, ապա կարող է, գրավոր ծանուցելով, հարցը ներկայացնել այդ պետության ուշադրությանը: Ծանուցումն ստանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, ծանուցվող պետությունը բողոք ներկայացրած պետությանը պետք է տրամադրի հարցի վերաբերյալ գրավոր բացատրություն կամ հայտարարություն, որը, հնարավորության և նպատակահարմարության սահմաններում, պետք է ներառի տեղեկություններ հարցի առնչությամբ ձեռնարկված կամ նախատեսվող կամ հասանելի ընթացակարգերի ու միջոցների մասին:
2. Եթե հարցը չի լուծվում երկու կողմերին գոհացնող կերպով, կա՛մ երկկողմ բանակցությունների, կա՛մ հասանելի որևէ այլ ընթացակարգի միջոցով, ապա սկզբնական ծանուցումը ծանուցվող պետության ստանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, պետություններից յուրաքանչյուրն իրավունք ունի հարցը ներկայացնելու Հանձնաժողովին՝ Գլխավոր տնօրենին և մյուս պետությանը ծանուցելով:

3. Նախորդ պարբերությունների դրույթները չեն ազդում կողմ պետությունների՝ իրենց միջև գործող ընդհանուր կամ հատուկ միջազգային համաձայնագրերի ներքո վեճերի լուծման այլ ընթացակարգեր կիրառելու իրավունքների վրա, ներառյալ փոխադարձ համաձայնությամբ վեճը Հաագայի մշտական արբիտրաժային դատարան ներկայացնելու իրավունքը:

### ՀՈՂՎԱԾ 13

Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցերորդ տարվա սկզբից, Հանձնաժողովը կարող է նաև պատասխանատվություն կրել Կոնվենցիայի կիրառման և մեկնաբանման առնչությամբ այն պետությունների միջև ծագող վեճերի լուծման համար, որոնք Կոնվենցիայի կողմեր են, սակայն չեն հանդիսանում սույն Արձանագրության կողմեր, կամ ոչ բոլորն են սույն Արձանագրության կողմեր, եթե նշված պետությունները համաձայնում են վեճը ներկայացնել Հանձնաժողովին: Համաձայնության հասնելու համար տվյալ պետությունների կողմից կատարման ենթակա պայմանները կսահմանվեն Հանձնաժողովի ընթացակարգային կանոններով:

### ՀՈՂՎԱԾ 14

Հանձնաժողովը կգբաղվի սույն Արձանագրության 12-րդ կամ 13-րդ հոդվածի ներքո իրեն ներկայացված հարցով՝ հավաստիանալուց հետո միայն, որ հարցը լուծելու համար կիրառվել և սպառվել են հնարավոր բոլոր ներքին միջոցները՝ միջազգային իրավունքի՝ համընդհանուր կերպով ձանաչված սկզբունքներին համապատասխան:

### ՀՈՂՎԱԾ 15

Հանձնաժողովը չի դիտարկի արդեն իսկ քննության առնված հարցերը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նոր բաղադրիչներ են ներկայացվել:

### ՀՈՂՎԱԾ 16

Իրեն ներկայացված ցանկացած հարցի պարագայում Հանձնաժողովը կարող է դիմել առնչություն ունեցող պետություններին՝ գործին վերաբերող համապատասխան տեղեկություններ ներկայացնելու համար:

### ՀՈՂՎԱԾ 17

1. 14-րդ հոդվածի դրույթների կատարման պայմանով՝ Հանձնաժողովը, ստանալով անհրաժեշտ համարվող բոլոր տեղեկությունները, կհաստատի փաստերի իսկությունը և միջնորդի դեր կստանձնի վեճում ներգրավված պետությունների համար՝ հարցը բարեկամաբար լուծելու նպատակով, հիմք ընդունելով Կոնվենցիայի նկատմամբ հարգանքը:

2. Հանձնաժողովը յուրաքանչյուր դեպքի համար և ամեն դեպքում ոչ ուշ, քան մինչև Գլխավոր տնօրենին 12-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն ներկայացված ծանուցումն ստանալու օրվանից տասնութ ամիս հետո, կմշակի զեկույց՝ ներքոշարադրյալ 3-րդ

պարբերության դրույթներին համապատասխան, որը կուղարկվի վեճի կողմ պետություններին, իսկ դրանից հետո կտրամադրվի Գլխավոր տնօրենին՝ հրապարակման համար: Եթե, 18-րդ հոդվածի համաձայն, պահանջվում է Արդարադատության միջազգային դատարանի խորհրդատվական կարծիքը, ապա ժամկետը համապատասխանաբար կերկարացվի:

3. Եթե վեճը լուծվել է սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն, ապա Հանձնաժողովն իր զեկույցում կսահմանափակվի փաստերի և ձեռք բերված կարգավորման հակիրճ ներկայացմամբ: Եթե վեճը չի լուծվել, Հանձնաժողովը զեկույցը կկազմի փաստերի հիման վրա և կնշի հաշտեցման համար իր արած առաջարկությունները: Եթե զեկույցն ամբողջությամբ կամ մասամբ չի ներկայացնում Հանձնաժողովի անդամների միաձայն կարծիքը, ապա Հանձնաժողովի ցանկացած անդամ իրավունք ունի զեկույցին առանձին կարծիք կցելու: 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության «գ» կետի համաձայն կողմերի ներկայացրած՝ հարցին առնչվող գրավոր և բանավոր փաստարկները կցվում են զեկույցին:

### **Հոդված 18**

Հանձնաժողովը կարող է առաջարկություն ներկայացնել Գործադիր խորհրդին կամ Գլխավոր խորհրդատուին, եթե առաջարկությունը ներկայացվում է վերջինիս նստաշրջաններից որևէ մեկի բացման օրվանից երկու ամիս առաջ, որպեսզի Արդարադատության միջազգային դատարանից խորհրդատվական կարծիք հայցվի Հանձնաժողովի քննությանը ներկայացված խնդրին առնչվող ցանկացած իրավական հարցի վերաբերյալ:

### **Հոդված 19**

Հանձնաժողովը Գլխավոր խորհրդատուի կանոնավոր նիստերից յուրաքանչյուրին հաշվետվություն կներկայացնի իր գործունեության մասին, որը Գլխավոր խորհրդատուին կփոխանցվի Գործադիր խորհրդի կողմից:

### **Հոդված 20**

1. Գլխավոր տնօրենը Հանձնաժողովի առաջին նիստը կիրավորի Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության կենտրոնակայանում՝ Գլխավոր խորհրդատուի կողմից նշանակվելուց հետո երեք ամսվա ընթացքում:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստերը կգումարվեն ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովի նախագահի կողմից, որին, ինչպես նաև Հանձնաժողովի մյուս անդամներին, Գլխավոր տնօրենը կփոխանցի սույն Արձանագրության դրույթների համաձայն Հանձնաժողովին ներկայացված բոլոր հարցերը:

3. Չնայած սույն հոդվածի 2-րդ պարբերությանը՝ այն դեպքում, երբ Հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդը գտնում է, որ Հանձնաժողովը, սույն Արձանագրության դրույթների համաձայն, պետք է քննության առնի որևէ հարց, Նախագահը պետք է բավարարի նրանց պահանջը՝ այդ նպատակով գումարելով Հանձնաժողովի նիստ:

### **Հոդված 21**

Սույն Արձանագրությունը կազմվել է անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն, ընդ որում՝ բոլոր չորս տեքստերն էլ հավասարազոր են:

#### **ՀՈՂՎԱԾ 22**

1. Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման կամ ընդունման Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության անդամ պետությունների կողմից, որոնք Կոնվենցիայի կողմեր են:
2. Վավերացման կամ ընդունման մասին փաստաթղթերն ի պահ կհանձնվեն Գլխավոր տնօրենին:

#### **ՀՈՂՎԱԾ 23**

1. Սույն Արձանագրությունը միանալու համար բաց է Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության անդամ չհանդիսացող բոլոր պետությունների համար, որոնք Կոնվենցիայի կողմեր են:
2. Միանալը կատարվում է միանալու մասին փաստաթուղթը Գլխավոր տնօրենին ի պահ հանձնելով:

#### **ՀՈՂՎԱԾ 24**

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ միանալու մասին տասնհինգերորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո, բայց միայն այն պետությունների համար, որոնք ի պահ են հանձնել իրենց համապատասխան փաստաթուղթն այդ օրը կամ դրանից առաջ: Մյուս պետությունների համար այն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ միանալու մասին իրենց փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո:

#### **ՀՈՂՎԱԾ 25**

Ցանկացած պետություն վավերացման, ընդունման կամ միանալու ժամանակ կամ դրանից հետո՝ ցանկացած ժամանակ, կարող է, Գլխավոր տնօրենին ծանուցելով, հայտարարել, որ նույն պարտավորությունն ստանձնող ցանկացած այլ Պետության առնչությամբ, 17-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ նախատեսված զեկույցը կազմելուց հետո, համաձայնում է Արդարադատության միջազգային դատարան ներկայացնել սույն Արձանագրության շրջանակում եղող ցանկացած վեճ, որը 17-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն բարեկամաբար չի լուծվել:

#### **ՀՈՂՎԱԾ 26**

1. Սույն Արձանագրության կողմ ցանկացած պետություն կարող է այն չեղյալ հայտարարել:
2. Չեղյալ հայտարարման մասին ծանուցվում է Գլխավոր տնօրենը ի պահ հանձնվող գրավոր փաստաթղթի միջոցով:

3. Կոնվենցիայի չեղյալ հայտարարումն ինքնաբերաբար կհանգեցնի սույն Արձանագրության չեղյալ հայտարարման:

4. Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարման մասին փաստաթուղթն ստանալուց տասներկու ամիս հետո: Արձանագրությունը չեղյալ հայտարարող պետությունը, այնուամենայնիվ, ենթակա է Արձանագրության դրույթներին իր հետ կապված այն հարցերի առնչությամբ, որոնք ներկայացվել են Հանձնաժողովին նախքան սույն պարբերության մեջ նախատեսված ժամկետի ավարտը:

#### **ՀՈՂՎԱԾ 27**

Գլխավոր տնօրենը տեղեկացնում է Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության անդամ պետություններին, 23-րդ հոդվածում նշված Կազմակերպության անդամ չհանդիսացող պետություններին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպությանը 22-րդ և 23-րդ հոդվածներով նախատեսված՝ վավերացման, ընդունման կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու, ինչպես նաև 25-րդ և 26-րդ հոդվածներով նախատեսված, համապատասխանաբար, ծանուցումների և չեղյալ հայտարարումների մասին:

#### **ՀՈՂՎԱԾ 28**

Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Արձանագրությունը գրանցվում է Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում՝ Գլխավոր տնօրենի դիմումի հիման վրա:

Կատարված է Փարիզում 1962 թվականի դեկտեմբերի տասնութին, երկու բնօրինակով, որոնք կրում են Գլխավոր խորհրդաժողովի տասներկուերորդ նիստի նախագահի և Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենի ստորագրությունները, և որոնք ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության արխիվին, իսկ դրանց վավերացված օրինակներն ուղարկվում են «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիայի 12-րդ և 13-րդ հոդվածներում նշված բոլոր պետություններին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպությանը: